ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ք.Եղեգնաձոր

22 դեկտեմբեր 2022թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստի

Նիստը վարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյանը: Նիստի աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի 11 անդամներից 9-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> 2022թվականի տարեկան հաշվետվությունը /Դ.Սարգսյան/:
2. Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման աշխատանքները ՀՀ Վայոց ձորի մարզում 2022 թվականին / Ա.Խաչատրյան/:
3. Քննարկումներ:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 2022 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>>, մարզային իշխանությունների, համայնքապետարանների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված աշխատանքների, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ զեկույցը:

Մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Խաչատրյանը ներկայացրեց հաշմանդամություն ունեցող երեխաների ներառմանն ուղղված աշխատանքները, ոլորտում առկա խնդիրները :

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի <Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի> 2022 թվականին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը: Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ծրագրերի մասին իրազեկել հասարակությանը՝ մարզպետարանի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով:
2. Ի գիտություն ընդունել հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ զեկույցը:

Հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան